ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ L « » 2024թ. ք. Երևան

ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ (ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ) 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 18-ի թիվ 202-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ պետական սեփականություն համարվող անշարժ գույքի մշտադիտարկման (մոնիթորինգի) տարեկան ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)՝ համաձայն հավելվածի:

2. Քարտուղարության պետին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո Ծրագիրը 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում տեղադրել Պետական գույքի կառավարման կոմիտեի ինտերնետային պաշտոնական www.stateproperty.am կայքում:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի տեղակալ Գևորգ Բաբայանին:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

4/1/2024

X

ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ստորագրություն՝ Подписано: AVETISYAN ARNAK 1701920336 **ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի
2024թ. «_____» «____» -ի
N _____ - Լ հրամանի

ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ
ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ (ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ)

1. Պետական սեփականություն համարվող անշարժ գույքի մշտադիտարկման (մոնիթորինգի) տարեկան ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) կազմվում է՝ ելնելով պետական սեփականություն հանդիսացող գույքի մոնիթորինգի հիմնական նպատակներից, մասնավորապես.

1) գնահատել պետական գույքի ռիսկայնության աստիճանը.

2) վեր հանել գույքի օգտագործումը կանոնակարգող իրավական ակտերի պահանջներից թույլ տրված շեղումների և դրանց պատճառած վնասների չափը.

3) բացահայտել գույքի օգտագործման արդյունավետության մակարդակը.

4) պետական մարմինների, կազմակերպությունների և հիմնադրամների գործառույթների իրականացման համար պետական մարմնին ամրացված, կազմակերպությանը և հիմնադրամին օգտագործման տրամադրված գույքի օպտիմալ կազմի և կառուցվածքի ձևավորումը.

5) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մուտքերի ավելացումը.

6) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասի ծանրաբեռնվածության իջեցումը.

7) գույքի օգտագործման արդյունավետության բարձրացումը.

8) գույքի օգտագործման վիճակի վերաբերյալ անհրաժեշտ մոնիթորինգի բազայի ստեղծումը.

9) գույքի օգտագործման վիճակի գնահատումը։

2. Ծրագրում ընդգրկվում են մոնիթորինգի ենթակա անշարժ գույքերը՝ համաձայն NN 1, 2 և 3 ցանկերի։

3. Ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր միավոր գույքի մոնիթորինգի իրականացման առավելագույն ժամկետը սահմանվում է 5 (հինգ) աշխատանքային օր։

4. Գույքի մոնիթորինգը Ծրագրի 3-րդ կետով սահմանված ժամկետում իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 18-ի «Պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օգտագործման վիճակի մշտադիտարկումներ անցկացնելու կարգը հաստատելու մասին» թիվ 202-Ն որոշմանը (այսուհետ՝ Որոշում) կից NN 2 և 3 ձևերով նախատեսված տեղեկանքներին համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի N 562-Ն որոշմամբ սահմանված պետական գույքի էլեկտրոնային հաշվառման բազայում հաշվառված գույքի ընդհանուր բնութագրիչների և նրա օգտագործման արդյունքների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա։

5. Ուսումնասիրության ընթացքում, պետական գույքի օգտագործողի կողմից տրամադրված և պետական գույքի էլեկտրոնային հաշվառման համակարգում ներկայացված տեղեկատվությունում տեղ գտած թերությունների, վրիպակների վերաբերյալ մոնիթորինգ իրականացնող՝ Պետական գույքի կառավարման կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումը գույքի օգտագործողից, իսկ Պետական գույքի կառավարման կոմիտեն վերջինիս վերադաս մարմնից կարող է պահանջել փաստաթղթեր, ինչպես նաև պարզաբանումներ գործառույթների իրականացման իրավաչափությունը պարզելու համար։

6. Մոնիթորինգի ընթացքում հավաքագրված տեղեկությունների հիման վրա իրականացվում են արդյունքների վերլուծություն, իրավական գնահատում, և սահմանված ժամկետներում Որոշմանը կից N 1 ձևին համապատասխան կազմվում է մոնիթորինգի վերաբերյալ արձանագրություն, որը ներկայացվում է Որոշմամբ հաստատված կարգի 12-րդ կետով ստեղծված հանձնաժողովի քննարկմանը և հաստատմանը։

7. Գույքի օգտագործման վերլուծությունն իրականացվում է Որոշմամբ հաստատված կարգի 27-րդ կետի 1-5 ենթակետերով սահմանված պահանջներին համապատասխան։